

մանք թէպէտ եւ ոչ առժամայն կրեցին թրխատութիւն, սակայն յանձին կալեալք՝ զի եւ նոքա եւս ի ժամ զիպող կատարեալ լնուցուն զկամս ամիրայետիւն» (էջ 163-164) : Բացի Սմբատ սպարապետէ եւ Ստեփաննոս Կոննի նահատակութենէն, կը դըրէ Յովհաննէս կաթողիկոս, «Բայց այլոց իշխանացն թուի ինձ եւ ոչ մի ինչ մնացեալ՝ որք ոչ եղեն հետեալք յաստուածակողմանն, կամ ոչ շեղեալք յանօրէն օրէնս...» (էջ 165) : Վկայութեան համաձայն առ հասարակ բոլորն ալ կ'ընդունին իսլամութիւն, թէեւ ժամանակաւորապէս : Յովհաննէս կաթողիկոս կը շարունակէ . «Բայց իշխանք եւ նախարարք Հայոց, որք ըմբռնեալք գերեցան ի Բուղայէ, զայսու ժամանակաւ մի ըստ միօջէ ի կարգ անկեալ՝ չունէին յաշխարհ տէրութեան իւրեանց, եւ ի սեպհականութիւնս եւ ի տունս : Եւ ապա մերկացեալ յանցանաց իւրեանց զակամայ ուսումնս... օրինացն Մահմէտի, զբրիտսուանդ օրէնս հայրենիս առ հասարակ բարձրացուցեալ բերէին յանձինս իւրեանց ոչ ի ծածուկ երկիւղիւ ինչ, այլ իրրեւ ի վերայ բարձր տանեաց քարոզէին գՔրիստոսի աստուածալստութիւնն : Ընդ որս հաճեալ Տէրն, բնակեցոյց յուսով զնոսա . յորմէ եւ օրհնութեամբ օրհնեցան» (էջ 170-71) :

Յականէ յանուանէ չի յիշուիր Ապումուսէի վերադարձը, սակայն տարակոյս չկայ որ Ատրնեսէի հետ վերադարձաւ

նաեւ Ապումուսէ : Ըստ վկայութեան պէտք է ընդունիլ որ երկուքն ալ առ երեսանց ընդունեցին մահմետականութիւնը, որպէս զի կարենան հայրենիք վերադառնալ : Անգամ մը որ իրենց երկիրը դարձան, դարձեալ ըստ վկայութեան, կը թողուն իրենց երեսանց իսլամութիւնը եւ վերստին կը դաւանին քրիստոնէութիւն :

Ապումուսէ ողջ էր 906ին, երբ Տաթեւայ վանքին սահմաններուն վճիռը կը ստորագրէր, ըսելով . «Մենք Գրիգոր եւ Եսայի եւ Ատրնեսէ՝ Աղվանից իշխանք, վկայ եմք այսմ վճոխի » (Օրբէլեան, էջ 234) :

Ասկէ վերջ որեւէ ուրիշ տեղեկութիւն չենք գտներ Ապումուսէի եւ նոյնիսկ իր Մուշեղ որդւոյն մասին :

Յայտնի չէ թէ երբ կամ ինչպէս մեռաւ այս քաջամարտիկ Հայ իշխանն Աղուանից : Արծրունի զայն կը կոչէր Եսայի Ապումուսէ, որ զշատ պատերազմուսն ետար : (էջ 310) : Անտարակոյս ակնարկելով Բուղայի գէմ իր յաղթական մարտընչումներուն :

Յ. Գ. - Աւելորդ նկատեցինք ընել բաղմամբիւ ճշգումներ զանազան ուսումնասիրութեանց մէջ՝ ուսումնասիրութեանս մէջ յիշուած զանազան անուններու վերաբերմամբ : Եղած են սխալ նոյնացումներ, կամ նոյն անձը քանի մը անձեր նկատուած են :